Ծնողների իրավունքները

- Հայաստանի Հանրապետությունում ծնողական իրավունքներն իրականացնելիս ճանաչվում է ծնողների իրավահավասարությունը: Երեխաների դաստիարակությունն ու կրթությունը կազմակերպելու, նրանց ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացմանը մասնակցելու, նրանց իրավունքներն և շահերը ներկայացնելու, նրանց հետ անարգել շփվելու իրավունքներն այն հիմնական իրավունքներն են, որոնցից ածանցվում են ծնողների համար օրենսդրությամբ սահմանված մի շարք այլ իրավունքներ:

- Երբ ծնողն իր գործողություններով կամ վարքագծով վտանգում է երեխայի հոգեկան, մտավոր կամ բարոյական զարգացմանը, դատարանը, օրենքով սահմանված կարգով, կարող է սահմանափակել նման ծնողի ծնողական իրավունքները, իսկ օրենքով սահմանված դեպքերում անգամ զրկել դրանցից: Ինչպես արդեն նշվեց, ծնողներն իրենց երեխաների նկատմամբ ունեն հավասար իրավունքներ, հետևաբար երեխային առնչվող ցանկացած հարցում վերջիններս պետք է գործեն փոխադարձ համաձայնությամբ՝ ելնելով երեխաների լավագույն շահերից: Ծնողների իրավահավասարությունը պահպանվում է նաև ծնողներից մեկի՝ երեխայից առանձին ապրելու դեպքում:

- Ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխայի բնակության վայրը որոշվում է ծնողների համաձայնությամբ, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատական կարգով: Հարցը լուծելիս դատարանը ելնում է երեխայի լավագույն շահերից՝ հաշվի առնելով երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշներ, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն):

- Դատարանը լսում է նաև երեխայի կարծիքը, որը թեև ընդհանուր առմամբ դատարանի համար պարտադիր չէ, այնուամենայնիվ, կապված գործի հանգամանքներից և տվյալ քաղաքացիական վեճով ուշադրության համար արժանի հանգամանքներից, կարող է որոշիչ լինել:
Կարևոր է նկատի ունենալ, որ երեխայի բնակության վայրը մյուս ծնողի բնակության վայրը սահմանող դատական ակտի առկայության դեպքում և՛ ծնողը պահպանում է տվյալ ծնողի հետ ծնողական իրավունքների իրացման հարցում ունեցած իրավահավասարությունը: Ըստ այդմ՝ առանձին ապրող ծնողն իրավունք ունի անարգել շփվել երեխայի հետ, շարունակել ակտիվորեն մասնակցություն ունենալ նրա դաստիարակության և կրթություն ստանալու հարցերին, իսկ երեխայի հետ ապրող ծնողը պարտավոր է չխոչընդոտել առանձին ապրող ծնողի իրավունքների իրականացմանը:

- Այն դեպքում, երբ ծնողներին չի հաջողվում ձեռք բերել փոխադարձ համաձայնություն երեխային առնչվող հարցերում, դրանց լուծումը կարող են վերապահել խնամակալության և հոգաբարձության մարմնին կամ դատարանին: Պետք է նկատի ունենալ, որ երեխաների դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող ցանկացած հարց լուծելիս կրկին հաշվի է առնվում երեխայի կարծիքը: Վերջում հավելենք, որ օրենքի ուժով ծնողական իրավունքներիը ծնողի մոտ դադարում են երեխայի տասնութ տարեկանը լրանալիս, ինչպես նաև սահմանված կարգով ամուսնանալիս կամ երբ օրենքով սահմանված կարգով մինչև չափահաս դառնալը երեխան ձեռք է բերում լրիվ գործունակություն (էմանսիպացիա):